Գործ հ. ԲՀԴ /03/20

ՎՃԻՌ

ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԻ

Երկու հազար քսան թվականի մայիսի տասներկուսին ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղաք Մարտունի

Բնապահպանական հանրային դատարանը, COVID-19 համավարակով պայմանավորված, հեռավար եղանակով անցկացրեց դատական նիստ՝ քննելով «Աստղաձոր համայնքի բնակիչների ջրի իրավունքի խախտման մասին» բնապահպանական հանրային գործն՝ ըստ Աստղաձորի բնակիչ Վարդան Գրիգորյանի դիմումի:

Բնապահպանական հանրային դատարանը՝ Նազելի Վարդանյան, Ինգա Զարաֆյան, Անահիտ Գևորգյան կազմով

Քարտուղարությամբ՝ Վիկտորյա Բուռնազյանի

Դիմումատու՝ Աստղաձորի բնակիչ Վարդան Գրիգորյանի

Պատասխանողի ներկայացուցիչ /ներ

ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Աշոտ Ավալյանը, ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանը, ՀՀ առողջապահության նախարարության գլխավոր քարտուղարի տեղակալ Վահե Հակոբյանը, Աստղաձորի համայնքապետ Ռոբերտ Խաչատրյանը ներկայացրեցին իրենց դիրքորոշումը

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի դատավարական նախապատմությունը</u>

Աստղաձոր համայնքը գտնվում է Գեղարքունիքի մարզում: Համայնքի միջով հոսում է Աստղաձոր գետը: Աստղաձոր համայնքի վարչական տարածքը կազմում է 2946 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 943 հա-ը: Համայնքի ազգաբնակչության հիմնական զբաղմունքը հողագործությունն ու անասնապահությունն է: Աստղաձոր համայնքի բնակչությունը 2018 թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 4679 մարդ: Համայնքի հիմնական խնդիրներն են խմելու և ոռոգման ջրի

անբավարարությունը: http://gegharkunik.mtad.am/u_files/file/gegharkunik: Աստղաձոր գետի սնման հիմնական աղբյուրներ են «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող բնական աղբյուրները:

2015թ-ին «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (ջրարբիացում) ծրագրի, իսկ 2016թ-ին «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացված «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային ծրագրի (Republic of Armenia Infrastructure and Rural Finance Support Programme (IRFSP) Loan No. 2000000779 Grant No. 2000000780) շրջանակներում Աստղաձոր գետի և ավազանի ջրերն ուղղվել են Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղ: 2016 թ. ծրագրի շրջանակներում Զոլաքար համայնքին տրվել է ջրօգտագործման թույլտվություն՝ Զոլաքար համայնքի վարչական տարածքում գտնվող «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող բնական 4 աղբյուրներից 23.1 լ/վրկ ջուր օգտագործելու համար: /Իրականում սարերից եկող Աստղաձոր գետի ջրերը խողովակաշարով՝ հիդրոտեխնիկական կառույցով (ՀՏԿ) տեղափոխվել են Զոլաքար համայնք/

Աստղաձոր գետը սնուցող աղբյուրներից ջրառի արդյունքում գետն ամբողջովին ցամաքել է, ինչի հետևանքով այդ գետից նախկինում օգտվող Աստղաձոր համայնքը կանգնել է լուրջ խնդիրների առաջ, և գյուղի մոտ 4679 բնակիչ վերջին մի քանի տարում մնացել է առանց ջրի: Իսկ ոռոգման սեզոնին «Մարտունի ՋՕԸ»-ն Սևանա լճից չի կարողանում մատակարարել բավարար քանակությամբ ոռոգման ջուր՝ ջրամղիչ պոմպերի հաճախակի խափանումների պատճառով:

Ներկայումս գյուղը խմելու և տնտեսական նպատակներով օգտագործում է խորհրդային տարիներին Հայաստանում ուրանային հումքի երկրաբանական ուսումնասիրությունների ժամանակ հորատված 4 հորերի 436, 991 հազարխմ ծավալով ջուրը, իսկ ոռոգման նպատակով՝ 52,5 հազարխմ՝ համաձայն 2019թ. ՀՀ շրջակա միջավայրի նախարարության թիվ 000031 ջրօգտագործման թույլտվության:

Արդյունքում, առաջացել է աղետալի էկոլոգիական իրավիճակ՝ ցամաքել է Սևանա լիճ թափվող Աստղաձոր գետը, խախտվել են գետի և շրջակա տարածքի էկոհամակարգերը, ինչպես նաև խախտվել են Աստղաձոր համայնքի բնակիչների իրավունքներն ու օրինական շահերը, և առաջացել է ծանր սոցիալ-տնտեսական իրավիճակ նրանց համար՝ անորակ խմելու ջուր, բերքի կորուստ ոռոգման ջրի բացակայության պատճառով, աղքատության և բնակչության արտագաղթի ավելացում:

Աստղաձոր համայնքի բնակիչների բազմաթիվ բողոքները և դիմումները ՀՀ պետական, իրավապահ և դատական մարմիններին մնացել են առանց բավարարման:

2. <u>Դիմումատուի փաստարկները և իրավական դիրքորոշումը</u>

Հարգելի դատարան,

Հայտնում եմ, որ դեռևս 1828-30 ական թվականներից ի վեր հիմնադրվել է ներկայիս ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գյուղը, որի հիմնադրման հիմնական պատճառներից մեկը հանդիսացել է Աստղաձոր գետի ջուրը, որը բնակչության կենսագործունեության համար էական նշանակություն է ունեցել, և այն օգտագործվել է ինչպես խմելու, այպես էլ ոռոգման համար: Հետագայում գետից ջուր են տարել Զոլաքար համայնքի բնակիչները ինքնաշեն առու կառուցելու միջոցով: Ժամանակի ընթացքում կլիմայի փոփոխության հետևանքով պակասել է գետի ջուրը, որն էլ ամբողջությամբ վերջին տարիներին՝ (2015-2017թթ.) «Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության» (ջրարբիացում) և «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության» («Գռան» և «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող չորս բնական աղբյուրներից՝ 23.1լ. վրկ. ջրառ իրականացնելու ՀՀ բնապահպանության նախարարության 15.04.2016թ. թիվ 000078 թույլտվություն) ծրագրերի իրականացման արդյունքում տեղափոխվել է Զոլաքար համայնք: Աստղաձոր համայնքը զրկվել է ջրից, որի հետևանքով էլ լուրջ խնդիրներ են առաջացել:

Դիմումի համար էական նշանակություն ունեցող փաստերը

1. 2017թ. ՀՀ բնապահպանության և առողջապահության նախարարներին ուղղված դիմումները
2. Դիմումներ նախկին և ներկայիս ՀՀ Գեղարքունիքի մարզպետներին
3. 17. 05.2019թ. ՀՀ Վարչապետ Ն. Փաշինյանին և ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումներ
4.Զոլաքար համայնքի ղեկավար Արման Ղազարյանի 2015թ. մայիսի 15-ի գրությունը՝ուղղված ՀՀ Գեղարքունիքի մարզպետին
5. ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 19.05.2015թ. գրությունը՝ ուղղված ՀՀ կառավարության աշխատակազմի« Գյուղականտարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ տնօրեն Ա. Վարդանյանին
6. 24.12.2015թ. ԾԻԳ-ի և Զոլաքար համայնքի միջև կնքված համաֆինանսավորման պայմանագիրը

7. 30.08.2016թ. Համաձայնագիր 1 /համաֆինանսավորման պայմանագիրը փոփոխելու մասին/

8. ՀՀ կառավարության աշխատակազմի « Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» ՊՀ-ի 22.11.2017թ. գրությունը «ԷկոԼուր» ՀԿ-ի նախագահ Ինգա Զարաֆյանին

9. Դիմում Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամին /IFAD/

10. 22.01.2018թ. ՀՀ բնապահպանության նախարարության պատասխանը Ա. Ասատրյանին

11. 26.02.2018թ. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր տնօրենի 26.02.2018թ. գրությունըԱստղաձոր համայնքի բնակիչ Ա. Ասատրյանին

12. ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն՝ ՊՈԱԿ-ի ՝Մարտունու՝ մասնաճյուղ-ի տնօրենի 19.01.2016թ. գրությունը Զոլաքար համայնքի ղեկավարին

Դիմումի հիմնավորումները և պահանջը

Ուսումնասիրելով Զոլաքար համայնքին ջրօգտագործման թույլտվություն տրամադրելու հետ կապված փաստաթղթերը և գործընթացը՝ միանշանակ կարող ենք պնդել, որ դրանք տրամադրվել են օրենքների և մեր իրավունքների կոպիտ խախտումներով:

Այսպիսով՝

1. Ըստ վերը նշվածի՝ պարզ է դառնում, որԱստղաձոր գետի ջրերն ավելի վաղ բնական ճանապարհով օգտագործել են Աստղաձոր համայնքի բնակիչները, իսկ Զոլաքար համայնքն ավելի ուշ է ջուր ստացել, այն էլ ինքնաշեն առվի միջոցով: Այսինքն, Աստղաձոր համայնքն ավելի վաղ է իրավունք ձեռք բերել Աստղաձոր գետի ջրերի նկատմամբ, քան՝ Զոլաքարը:

2. Նախկինում ջրի հետ կապված խնդիրներ չեն եղել, հետագայում (վերջին երկու տասնամյակների ընթացքում) կլիմայի փոփոխության պատճառով պակասել են գետը սնուցող աղբյուրների ջրերը, որն էլ իր էական ազդեցությունն է թողել Աստղաձոր համայնքի ազգաբնակչության սոցիալ-տնտեսական և կենսական գործունեության վրա: Այս կարևոր փաստը հաշվի չառնելով՝ 2015-2017թթ. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Աստղաձոր գետը սնող ակունքներից և գետից Զոլաքար համայնքին ջուր օգտագործելու թույլտվություն է տրվել:

3. «Գոլոս Արմենիի» թերթով ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից 24.03.2016թ. հանրային ծանուցում է տրվել Զոլաքար համայնքին խմելու-տնտեսական նպատակով «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակի» կոչվող չորս բնական

աղբյուրներից՝ 23.1լ/վրկ ջրառի ջրօգտագործման թույլտվության նախագիծ մշակելու համար: Նշենք, որ «Գոլոս Արմենիի» թերթը, լինելով ռուսական տպագրությամբ, չէր կարող հանրության ուշադրությունը գրավել, բացի այդ, թերթը հասանելի չէ Աստղաձոր համայնքին, ինչպես նաև Մարտունու տարածաշրջանին և մարզին: Սա ևս ապացուցում է, որ ցանկացել են գաղտնի պահել ջրօգտագործման թույլտվության տրամադրման հարցը Աստղաձորի ազգաբնակչությունից:

Հաշվի չի առնվել այն կարևոր փաստը, որ Աստղաձոր գյուղի ազգաբնակչությունն առաջինն է օգտվել Աստղաձոր գետի ջրերից և իրավուք ուներ մասնակցելու այդ ջրերի վերաբաշխման թույլտվության քննարկմանը: Խախտվել են ՀՀ Կառավարության «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը հաստատելու մասին» 2003թ-ի թիվ 218-Ն որոշման 6-րդ կետի պահանջները:

4. Գետը սնուցող ավազանի ջրերը Զոլաքար համայնք տեղափոխելու պատճառով գետի ջրերը գրեթե ամբողջությամբ ցամաքում է ամռվա ընթացքում, որն էլ լուրջ խնդիրներ է առաջացնում Աստղաձոր համայնքում՝ ինչպես բնապահպանական, այնպես էլ կենսական և սոցիալ- տնտեսական: Բոլորի համար պարզ ու հասկանալի է, որ ջուրը կենսական պահանջմունքներ է լուծում, այսպես ասած՝ ջուրը կյանք է: Աստղաձոր համայնքում որպես խմելու ջուր օգտագործում են խորքային հորերի ջրերը, երեք օրը մեկ, որն էլ իր որակական ցուցանիշներով զիջում է գետը սնուցող աղբյուրների ջրերին:

Ծրագրերի իրականացման արդյունքում, Աստղաձոր գետի ջրերը Զոլաքար համայնք տեղափոխելով, խախտվել է մեր հետևյալ իրավունքները՝

ա) Առողջ շրջակա միջավայրում ապրելու իրավունքը /Աստղաձորի ազգաբնակչությունը զրկվել է ջրից/

բ) Բնական պաշարների մատչելիության և կայուն օգտագործման իրավունքը /ՀՀ անկախության հռչակագիրը, հոդված 7, ՀՀ ազգային հարստությունը՝ հողը, ընդերքը, օդային տարածությունը, ջրային և այլ բնական պաշարները, տնտեսական, մտավոր, մշակութային կարողությունները նրա ժողովրդի սեփականությունն է/

գ) Առողջության իրավունքը /Լավ որակի ջուրը փոխարինվել է վատ որակի ջրով/

դ) Վնասի հատուցման իրավունք /ջրից զրկելու արդյունքում պատճառված վնասի փոխհատուցում/

ե) Սեփական գործունեության իրավունքը /ջրի բացակայության պատճառով ազգաբնակչությունը չի կարողանում զբաղվել գյուղատնտեսությամբ/

զ) Որ ոշումների ընդունման գործընթացում մասնակցության իրավունքը /ջրի վերաբաշխումը կատարվել է առանց աստղաձորեցիների հետ որևէ քննարկում անցկացնելու և կարծիք հայտնելու/

է) Տեղեկատվության մատչելիության իրավունքը /ջրի բաշխումը առանց աստղաձորեցիներին տեղեկացնելու/:

Վերը նշվածից բացի կան հիմնավոր ապացույցներ, որ Զոլաքար համայնքին ջրօգտագործման թույլտվության տրամադրման և համապատասխան ծրագրերի իրականացման գործընթացները կատարվել են կոռուպցիոն սխեմաներով: Մասնավորապես, 15.05.2015թ. Զոլաքար համայնքի ղեկավարը գրությամբ դիմել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ ***Զոլաքար համայնքի խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերը վերանորոգելու*** նպատակով, ինչպես նաև միջնորդել է, որ Զոլաքար համայնքը ընդգրկվի ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի ծրագրերի ցանկում՝ **համայնքում կառուցելու խիստ անհրաժեշտ հանդիսացող խմելու և ոռոգման ջրի ներքին ցանց**: Այսինքն,***Զոլաքար համայնքի խմելու և ոռոգման ջրի ներքին ցանցերը վերանորոգելու*** առաջարկությունից բացի այլ առաջարկություն կամ խնդրանք չի եղել գրությամբ, այս մասին է վկայում նաև Զոլաքար համայնքի ավագանու 14.05.2015թ. թիվ 13/1 որոշումը, որով Զոլաքար համայնքի ջրամատակարարման համակարգի վերանորոգման համար այլ միջոցներ ներգրավելու առաջարկով ավագանին որոշել է դիմել ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ: Այս գրությանը համապատասխան 19.05.2015թ. Գեղարքունիքի մարզպետը գրությամբ դիմել է ՀՀ կառավարության աշխատակազմի «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկ, որպեսզի Զոլաքար համայնքի համար ներդրում կատարվի: Եվ այս ամենի շրջանակներում Զոլաքար համայնքին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 2015թ-ին «Գռան» կոչվող ջրաղբյուրից 10.8 լ/վ ջրաքանակով տրամադրվել է թիվ 000350 ջրօգտագործման թույլտվությունը: Այնուհետև կատարվել է նախագծանախահաշվարկային աշխատանքներ և 2015 թվականի դեկտեմբերի 24-ին «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և Զոլաքար համայնքի միջև կնքվում է համաֆինանսավորման պայմանագիր:

Հետագայում առանց որևէ հիմնավորումների և փաստաթղթերի կատարվում է ջրօգտագործման թույլտվության փոփոխություն և Զոլաքար համայնքին 15.04.2016թ. «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակի» կոչվող 4 բնական աղբյուրներից 23/1 լ/վ

ջրաքանակով տրամադրվում է նոր ջրօգտագործման թույլտվությունը: Եվ այս թույլտվության հիման վրա էլ 30.08.2016թ. համաֆինանսավորման պայմանագրում կատարվում է փոփոխություն, ըստ որի, Զոլաքար համայնքին տրամադրվում է լրացուցիչ 140.000.000 ՀՀ դրամի ֆինանսավորում, որի արդյունքում էլ վերցվում են Աստղաձոր գետի ջրերը՝ զրկելով Աստղաձոր համայնքին ջուր ունենալու հնարավորությունից: Միթե՞ այս ամենը չեն ապացուցում, որ կա *հովանավորչություն, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահում, պաշտոնական լիազորությունների չարաշահում կամ վերազանցում, պաշտոնական կեղծիք, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացում ու վատնում, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումներ:*

Հիմք ընդունելով վերոգրյալը և ներկայացված փաստերը՝ խնդրում ենք դատարանին Աստղաձոր գյուղի մասով ծրագիրը ճանաչել չգոհացնող և ծրագրի ֆինանսավորման հաշվին ջուրը վերադարձնել Աստղաձոր:

Շնորհակալություն

Հարց

Ինգա Զարաֆյանից Վարդան Գրիգորյանին.

-ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունն իր պատասխանում առաջարկում է դիմել նախարարություն ՋԹ ստանալու համար: Ինչո՞ւ համայնքապետարանը չի դիմում:

Վարդան Գրիգորյան.

-Ինչ վերաբերում է այն փաստին, որ այսօր Շրջակա միջավայրի նախարարությունը նման հայտարարություն է տարածել, որ եթե Աստղաձոր համայնքը դիմեր, իրենք պատրաստ են ջրօգտագործման թույլտվություն տրամադրել, ես կարող եմ մեկ բան ասել՝ ինչ վերաբերում է Աստղաձոր գետին և գետից ջուր վերցնելու թույլտվությանը, ապա ոչ միայն իմ հիմնավորումներն են, կան նկարահանումներ, որ օգոստոս ամսի ընթացքում ամբողջովին ցամաքում է գետը: Սա ապացուցում է և լրացնում է այն փաստը, որ գետում ջուր չկա: Որտեղի՞ց կարող են մեզ թույլտվություն տալ, եթե այսօրվա դրությամբ գետում ջուր չկա: Ցամաքել է գետը: Ջուրն անհրաժեշտ է ազգաբնակչությանը հիմնականում հունիս-հուլիս ամիսներին: Իսկ այդ ամիսներին, առավելևս օգոստոսին, գետը ցամաքում է: Նման դեպքում սա հարցի լուծում չի կարելի դիտել: Գտնում եմ, որ այն ջուրը, որն ունենք այսօրվա դրությամբ, խնդրենք, որ նախկինի նման վերադարձվի Աստղաձոր համայնքին, կամ հակառակ դեպքում՝ջուրը բաշխվի ըստ ազգաբնակչության, ըստ շնչի:

Ընդամենը երկու աղբյուր ունենք, որ գտնվում են սարերում և հունիս-հուլիս ամիսներին ցամաքում են: Ես շատ կուզենայի վերջապես լսել նախարարության կարծիքը, թե Աստղաձոր համայնքին ՋԹ տրամադրելու համար այդ ջրերը որտեղից են տալու:

Զոլաքար համայնքի վարչական տարածքում ունեն Գռան աղբյուր, որն, ըստ համապատասխան տվյալների, տալիսէ 24 լ/վրկ ջուր: Այս աղբյուրից մի մասն է վերցված: Այդ աղբյուրի ջրաքանակի մի մասը մնացել է, դրա նկատմամբ ջրօգտագործման թույլտվություն տրված չէ: Շրջակա միջավայրի նախարարությունն այսօրվա դրությամբ ամրագրել է, որ եթե Աստղաձոր համայնքը դիմի իրեն, կտան ՋԹ, եթե Աստղաձոր համայնքը դիմի, և խնդրի Զոլաքար համայնքին Գռան աղբյուրի մնացած ջրաքանակը, նրա նկատմամբ, ՋԹ կտա՞ն, թե՞ ոչ: Սա շատ կարևոր խնդիր է: Մենք խնդրում ենք, որ այս հարցը բարձրացվի: Տեսնենք՝ իսկապես Զոլաքար համայնքը պատրաստակամություն կհայտնի Գռան աղբյուրի ջրի ազատ ջրաքանակից մեզ ջուր տալ: Եթե նրանք թույլ կտան, այդ մեծահոգությունը անեն, մենք դրան էլ ենք համաձայն:

Գյուղատնտեսությունն է վարի գնում, հողագործությունը, անասնապահությունը, իսկ այսօր Սևանի ավազանի ժողովուրդը միանշանակ զբաղվում է գյուղատնտեսությամբ, ուրիշ զբաղմունք չկա: Առաջընթացի փոխարեն հետընթաց է ապրում այսօր Աստղաձորը:

Նշեմ, որ Աստղաձոր համայնքի ղեկավարը 2018 թ. դիմել էր ՋԹ ստանալու համար: Բայց այն ստանալու համար պետք է համապատասխան փաստաթղթեր ներկայացվեին, ամբողջական չեն եղել և այդպես էլ մնացել է:

Հարց

Նազելի Վարդանյանից Վարդան Գրիգորյանին.

-Դուք Ձեր դիմումում նշել եք հովանավորչության մասին, խնդրում ենք հստակեցրեք, թե ինչ ի նկատի ունեք:

Պատասխան

Վարդան Գրիգորյան.

-Դեռևս 2015-2016 թթ., երբ Զոլաքար համայնքի կարիքների համար կառուցվել է, ջուրը տարվել է Աստղաձոր գետից, դրա հետ կապված մենք բացի իրավունքի խախտումից նշել ենք, որ կա կոռուպցիա այդ ծրագրերի իրականացման արդյունքում: Մենք դիմել ենք դատարան և փորձել ենք ապացուցել:

Դեռևս մինչև 2018 թ. հեղաշրջումը բոլորիս էլ պարզ հայտնի էր, թե ինչ էր կատարվում նախկին իշխանությունների օրոք: Ժամանակին ունեցել ենք մեր տարածքից պատգամավոր Հակոբ Հակոբյանին, ով հովանավորում էր Զոլաքար համայնքին:

Դեռևս 2015թ. Զոլաքար համայնքին տրվել էր ջրօգտագործման թույլտվություն: ՋԹ տալուց հետո՝ 2016 թ. ապրիլին, հնարավորություն էր ծագել ջրագծի կառուցման համար: Այս տարբերակով պատգամավորը հետ չէր մնացել: Եվ ի՞նչ էր արել: 2015 թ. դեկտեմբերին տրված թույլտվությունը հետագայում 2016 թ. ապրիլին փոխվեց: 2015թ-ին Զոլաքարը պահանջել էր ընդամենը 10.8լ/վրկ ջրօգտագործման թույլտվություն, որը և ստացել էր: Ընդամենը 2-3 ամիս հետո ի՞նչը փոխվեց: Ազգաբնակչության թվաքանակը փոխվե՞ց, ի՞նչ տեղի ունեցավ, որ նոր ՋԹ-ի տրամադրման պահանջներ կայացրեց Զոլաքարը: 2016թ-ին արդեն 23,1 լ/վրկ ջուր պահանջեցին: Կար ծրագիր: Մենք նշել ենք, որ Զոլաքար համայնքն ունի բնական աղբյուր՝ Գռան աղբյուր, որի ջրաքանակը կազմում է 24 լ/վրկ: Իրենք այդ ջուրը չեն վերցնում, և այդ 23,1-ից 10,8-ը վերցնում են մեր գետի ակունքները սնող ջրերը: 17 կմ ջրագիծ են կառուցում՝ ծախսելով 1 միլիարդ 237 միլիոն դրամ: Սրա մի մասն, իհարկե, ներքին ցանցի վերակառուցման վրա է ծախսվել, բայց միայն 140 միլիոնը տրամադրվել է ջրագծի կառուցմանը: Պետությունն ի՞նչ չպետք է աներ: Պետք է համայնքին հնարավորություն տար ավելի քիչ ծախս անել: Բայց եղավ հակառակը: Նրանք թողել են Գռան աղբյուրը, գնացել Աստղաձոր գետը սնող աղբյուրները…

Ջրօգտագործման թույլտվության համար, Կառավարության 218 որոշման համաձայն, պետք է հավաքագրվեն որոշակի փաստաթղթեր: Այդ փաստաթղթերի հավաքագրման արդյունքներից մեկն այն է, որ համապատասխան աղբյուրներից պետք է վերցվի ջուր, դրա նմուշը տարվի լաբորատոր ուսումնասիրության: 11.01.2016թ. ՀՀ Գեղարքունիքի մարզի Զոլաքարի գյուղապետարանը նամակով դիմում է ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի Գեղարքունիքի մասնաճյուղի տնօրեն Սարգսյանին, որում նշված է. «Խնդրում եմ Ձեզ տրամադրել Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող «Մեծ Զորի Թմբան տակ» կոչվող աղբյուրների խմելու քիմիական և մանրէաբանական հետազոտությունների ցուցանիշները»: Պատասխանն եմ կարդում 19.01.2016 թվականի. «Հարգելի պարոն Ղազարյան, ի պատասխան Ձեր 11.01.2016 թվականի թիվ 05 գրության, հայտնում եմ, որ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող և խմելու տնտեսական ջրամատակարարման համար նախատեսված «Մեծ Զորի Թմբան տակ» կոչվող աղբյուրներից վերցված մանրէաբանական, քիմիական և մակաբուծական հետազոտությունների արդյունքներում շեղումներ չեն արձանագրվել: Եվ նմուշները համապատասխանում են ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրին ներկայացվող հիգիենիկ պահանջների որակի հսկողություն սանիտարական նորմերի պահանջներին»:

Սա էլ Հիդրոմոնիթորինգի կենտրոնի տվյալները այդ աղբյուրների վերաբերյալ, այսպես ասած, անձնագիրն է, ըստ որի,աղբյուրները գտնվում են 3050 մ, 3075 և 3165 մ բարձրությունների վրա: Ի՞նչ եք կարծում, հունվար ամսին այս բարձրության վրա գտնվող աղբյուրների ակունքից հնարավո՞ր էր ջուր վերցնել: … Սա ևս մեկ անգամ ամրագրում է և ապացուցում, որ կոռուպցիոն ճանապարհով է արվել: Այսինքն, մարդիկ դիտավորությամբ են գնացել սրան: Մի գուցե, եթե ֆինանսատնտեսական ստուգումներ իրականացնեն, կապացուցվի, որ դրանք կատարվել են ֆինանսներ լվանալու հաշվին:

Եթե Զոլաքար համայնքին դիցուք տրվել է 23,1 լ/վրկ ջուր, ապա ամեն մի խողովակաշարի թե՛ սկբից թե՛ վերջում պետք է լինի չափիչ սարք: Նա պետք է չափի, որ իրականում վարկյանում 10.8 լ ջուր է գնում, թե՝ ոչ: Ըստ մոնիթորինգի տվյալների՝ այնտեղ ապահովվում է 50 լ/վրկ ջուր, ցանկացած պահի կարող են ամբողջ ջրաքանակը՝ 50 լ-ն էլ վերցնել: Որպես ապացույց չկա՝ ջրաչափիչ սարք: Եթե չկա, ով կարո՞ղ է ասել 50-ն են վերցրել, թե՝ 10.8-ը:

Եթե Զոլաքար համայնքը այդ 4 աղբյուրներից ջուր է վերցրել 10.8 լ/վրկ, ապա 10.8 լ/վրկ-ի համար կարող էր նախատեսել առավելագույնը 3 դյույմ խողովակաշար, իսկ իրենք բերել են 8 դյույմ խողովակաշար: Սա եթե վերածում ենք զուտ ֆինանսական առումով, ստացվում է, որ Զոլաքար համայնքն այստեղ գնացել է այն բանին, որ ավելի ֆինանսներ դրվի և ծախսվի:

3. <u>Տուժողների և վկաների վկայությունները.</u>

Արամայիս Ասատրյան, Աստղաձորի բնակիչ.

Զուրը կյանք է, եթե ջուր չկա, հացահատիկ չկա: Չենք ցանում, որովհետև առանց ջրի այդ ամեն ինչը վերացավ, ինչպես կենդանիները, այնպես էլ բնական խոտածածկը համարյա թե չկա: Անցյալ տարի, ինչպես նաև նախանցյալ տարի, որ երաշտ էր, փնջարմատներով բոլոր բույսերը գրեթե վերացան: Ամեն երրորդ տունը հիմա փակ է, դատարկ է, քոչել գնացել են, որովհետև ջուր չկա: Առանց ջրի ինչպես բուսականությունը, այնպես էլ մարդիկ չեն կարողանում ապրել, թողնում, գնում են: Իսկ գնացողների մեջ կան և՛ գիտնականներ, և՛ աշխատող ժողովուրդ, և՛ զորկաչին հասած երեխեք:

Ծրագրի արդյունքում Աստղաձորը տուժել է և՛ նյութապես, և՛ բարոյապես, և՛ ֆիզիկապես: Կարտոշկա ես ցանում, ջուր չկա, ստիպված պետք է լճի ջրից օգտագործվի: Քոչում, գնում են, դատարկվում է գյուղը: Եթե գնում են, դա չի ազդում իմ վրա՞, ազդում է: Ես հիվանդացել եմ, վիճակս վատ է, չի՞ ազդել, ազդել է: Ինչո՞ւ ես պետք է ներվայնանայի, այդ ջուրը չօգտագործեի, այլ խորքային ջրերի կեղտոտված, 1000 ու մի ծանր էլեմենտներով ջուրը: Վատանում ենք, հիվանդանում ենք: Համայնքում

14-15 հոր կա։ Կա որ չնչին ջուր է, կա որ լավ ջուր է, վայրկյանում 8 լ։ Դրանք ուրանի սահմանները ճշգրտելու հորեր էին, մի մասը բետոն լցրին, փակեցին, որովհետև և՛ խմելու և՛ ոռոգելու համար պիտանի չէր, հիմա 6-7 հատ հոր օգտագործվում է՝ և՛ խմելու, և՛ ոռոգելու համար։

Դիմումի մեջ գրված է, որ այդ ջրի հիման վրա է կառուցվել այս գյուղը, օգտվել է միայն մեր գյուղը։ Հետագայում թույլատրել է ջուր վերցնի նաև Զոլաքար համայնքը։ Այդ ջուրը բաշխվել է երկու գյուղերի միջև։ Երկու օր վերևի չորս աղբյուրների ջուրն է օգտագործվել։ Ինչպես նաև վտակ կա այդ գետից, այդ վտակի ջուրը յոթ օր գալիս է Աստղաձոր։ Հետագայում, եղանակի պատճառով, Զոլաքարը լրացուցիչ ջուր է վերցրել այդ ավազանից անասունների խմոցի համար, տարել է։ Դրանից հետո շատ ենք օգտագործում խորքային ջրերը, որովհետև չի բավարարում։ Այդ ջրերրը գալիս են վերևից, քամվելով գալիս է, հորերից դուրս է գալիս, ինչն ազդում է նաև Սևանի ավազանի, Սևանը սնուցող ջրերի վրա։ Սարերի ջուրը ներծծվում է և հորերից դուրս է գալիս. մենք քաշում, հանում ենք։ Առաջ ինքնահոս էր դուրս գալիս։

Հիմա այնտեղ բերել են ամբողջ ջուրը վերևից, որ ասում էին 5 օրը մեզ, 2 օրը ձեզ. . . Դա այն դեպքում էր, երբ ջուրը շատ էր։ Իսկ հիմիկվա վիճակում մինչև կտրեն, էդ խողովակից ջուր հանեն, նորից գա, մինչև հասնի Աստղաձոր, վերանում է, գոլորշանում է։ Էդ որ ասում են երկու օր-հինգ օր, էդ գետն ունի վտակ, էդ վտակից Զոլաքարը չի կարող օգտվել, 7 օր մենք ենք օգտագործում։ Դա համարել են մեկ օրվա ամբողջ ջուր։ Դրա համար 2 օր կար, էդ էլ մեկ օր, 3 օր մերն էր, 3,5 օր՝ իրենցը։ 50/50 ձևով այդ գետի ջուրն օգտագործում էինք։ Վտակի ջուրը մենք ենք օգտագործում, վտակը ցամաքել է։

Պետք է գան տեղում ջրաչափեր դնեն, վտակ կառուցեն, մի հատ էլ բասեյին։ Զոլաքարին լրացուցիչ 800 և 250 խմ բասեյններ ունի, չհաշված տեղի բնական աղբյուրը՝ 24,1 լ/վրկ։ Եթե տեղի աղբյուրը տալիս է 24,1 լ/վրկ, ապա 21 լ/վրկ ինչի՞ են ուզում։ Ունեն արդեն 24 լ, թող օգտագործեին, կամ եթե դա բնական աղբյուրներ են, դա պետական ժողովրդական սեփականություն է, իրենք ո՞վ են, որ ասում են մեր տարածքից է դուրս գալիս, մերն է։

Հանրային դատարանից մեր պահանջն այն է, որ գան, տեղում ըստ բնակիչների կամ ըստ տարածքի ջրաչափ դնեն։ 24 լ/վրկ Զոլաքարը ստանում է իր աղբյուրից, բնական աղբյուր էլ կա գյուղի մեջ, թող մեզ դրա կեսը տան։

Այդ ջրագիծը, որ առանց թույլտվության կառուցել են, 18 կմ ջուր են բերել: Մեր գյուղի վերևով է անցնում, եթե բասեին էլ կառուցեին, կօգտվենք այդ ջրերից: Թե քանի լիտր պետք է տան, ինչքան են նախատեսում, դա արդեն մասնագետները գիտեն: Մենք արդեն ապացուցել ենք, որ ջրի կարիք ունենք, մեկ տարի առաջ գյուղի վերևում բասեին պետք է կառուցեին ոռոգելու համար, սկի չի էլ երևում: Իսկ այն ջուրը, որ լցրել են խողովակի մեջ, 1 կմ լրացուցիչ կառուցեն, ջրամբար էլ կառուցեն, և գյուղը յոլա գնա:

Սուրեն Պետրոսյան՝ Աստղաձորի բնակիչ.

-Աստղաձորը հիմնադրվելէ 1828 թ. Աստղաձոր գետի ջրի շնորհիվ: Տարիների ընթացքում գնալով ջուրը պակասել է: Միշտ էլ Աստղաձորը ջրի սով է ունեցել: 70-ական թթ. մեր գյուղի բնակիչները բարձրաձայնեցին խմելու ջրի պակասի մասին, Ծակքար գյուղից խմելու ջուր խողովակներով բերեցին: Այն ինչ անկախության տարիներից հետո արդեն այդ գյուղի բնակիչները չթույլատրեցին: Այդ խողովակները մնացին, ժանգոտեցին, հանեցին, տարան: Մի խոսքով, այդ ջրից զրկվեցինք:

Հիմա ջուրը տարել են Զոլաքար: Ունենք գետ քարտեզում Աստղաձոր անվամբ, բայց չունենք գետի ջուր: Հետևաբար, խախտվել են և՛ մեր իրավունքները, և՛ այդ գեղատեսիլ վայրերը, որոնք ունեին մի քանի փոքր աղբյուրներ: Բացի կենդանական աշխարհից, անասնապահական ընտանի կենդանիների կոտորում եղավ, միաժամանակ ազդեց գյուղատնտեսական աշխատանքների վրա: Այսօրվա դրությամբ մնացել է միայն էլեկտրաէներգիայի օգտագործմամբ պոմպերով խորքային հորերից, մեկ էլ Սևանա լճից ջուր հանելը: Աստղաձոր գյուղի բոլոր բնակիչները թե՛ սոցիալապես, թե՛ հոգեպես, թե՛ տնտեսապես կործանման եզրինեն:

Այսօրվա դրությամբ մարդիկ արդեն սկսել են հիասթափվել: Հատկապես վերին թաղամասնիր խմելու ջուրը օգտվում էր այդ ջրից: Այսօրվա դրությամբ այնչ կա: Գրեթե 100 հա-ը գետի ջրի շնորհիվ ոռոգվում էր: 100 հա-ը անջրդի է, չեն կարող ոռոգել մարդիկ: Այդ գետի ինչ-որ մաս դարձել է զիբիլանոց, եթե տեղումներ չլինեն, ժանտախտ էլ, կարելի է ասել, կլինի:

Վազգեն Մինասյան՝ Աստղաձորի բնակիչ.

-Մենք վերին թաղն ենք ապրում: Ընդհանրապես ջուրչ կա՝ ոչ խմելու, ոչ ոռոգման: Այդ խմելու ջուրն արտեզյան է, լրիվ որդ ու եսիմ ինչ է գալիս, չորս օրը մեկ են տալիս: Հոսանքով է, պոմպով հանում ենք մոտ 70-80 մ խորությունից: Առավոտ 1 սմ ժանգ է նստում դույլի տակը: Մենք ենք խմում դա: Երեխեքը լրիվ հիվանդ են: Մեջքն է ցավում, փորն է ցավում… Այդ ջուրը, որը մենք օգտագործում ենք, թույն է:

Ստիպված այնտեղից մեքենայով գնում եմ գյուղի տակ, արտեզյան հորերից ջուր եմ վերցնում, և օգտագործում ենք: Պահանջում ենք, որ մեր ջուրը տան մեզ:Մենք մեր ջուրն ենք պահանջում: Թեկուզ կեսով կես լինի, թե ազգաբնակչության չափով է, թե ոնց է, գոնե մեզ տան:

Այդ ջուրը մենք օգտագործում էինք և՛ խմելու, և՛ ոռոգմանհամար: 4-5 հոգի հարևան ունեինք, քոչել, գնացել են: Ստիպված մենք էլ պետք է քոչենք, գնանք, սպասում ենք այսպահին՝ դզվում է, թե չի դզվում: Բազմաշունչ ընտանիք եմ, վերցնեմ, գնամ այստեղից:

Վրեժ Պողոսյան՝ Աստղաձորի բնակիչ.

Բնակչության արտահոսքը կանգնեցնելու համար կառուցվեց պոմպակայան և խմելու ջրագիծ Ծակքար գյուղից: Անկախության տարիներին այդ ջրագիծը չգործեց, պոմպակայանն էլ արդեն շարքից դուրս է եկել: Հիմա այդջուրը բավարարում է ընդամենը Զոլաքար-Աստղաձոր գնացող ճանապարհի դեպի ներքև հատվածին, մնացած հատվածը ոռոգվում էր սարի ջրով, որը գալիս էր ինքնահոս: Հիմա ամառվա ամիսներին ջուրն ամբողջովին ցամաքում է: Գյուղից անասուններին երբ տանում են հանդ արածելու, այդ անասունները առավոտ խմում էին այդ ջրից, իրիկունը նորից խմում, գալիս էին տուն: Հիմա բացարձակապես ջուր չկա, այդ անասունները ծարավ գալիս են:

Աստղաձորում ժամանակին կար մոտ 3000 գլուխ խոշոր, մոտ 4-5000 մանր եղջերավոր անասուն: Ջրի պատճառով այսօր 5-6 անգամ գլխաքանակը պակասել է: Քանի որ Հայաստանում խոշոր արդյունաբերություն չունենք, պետք է հիմնական ուղղվածությունը լինի գյուղատնտեսությունը: Իսկմենք վերացնում ենք անասունները:

Գյուղի վերևի հատվածն ամբողջովին ոռոգվում էր այդ ջրով, հիմա այդ ջուրը չկա, ծովի ջուրը չի բարձրանում. գյուղի մինչև վերև պոմպակայանը չի մղում, քանի որ շարքից դուրս եկած է: Ստացվում է այնպես, որ եթե հողամասը պետք է ջրենք 3-5 օրը մեկ, այսօր՝ 10-15 օրը մեկ: Բերքատվությունն ընկնում է, երաշտի պատճառով, մանավանդ վերջին տարիների կլիմայական փոփոխությունների պայմաններում անհնար է դառնում, քանի որ 3-4 օրը մեկ պետք է հողամասը ջրել, իսկ եթե անցավ շաբաթ՝ 7-10 օր, բնական է՝ բերքատվության վրա ազդում է: Ստիպված այդ հողը պետք է չմշակեն: Վերևի հատվածներում, որ գետի ջրով էինք ջրում, ունենք 30 հա հողատարածք, այնտեղ այն ջրվում էր այդ սարի ջրով, որն այսօր դարձել է ամայի, չի ոռոգվում:

Պոմպակայանը կառուցվել է 400 հա-ի համար՝ ներառյալ Աստղաձորի Ձորի թաղամասը: Պոմպակայանում հիմա մեկ հատ նասոս է աշխատում: Մի քանի անգամ անցյալ, նախանցյալ տարի ժողովուրդը դուրս է եկել, ճանապարհ է փակել,

որ ոռոգման ջուր չկա։ Ամբողջ գյուղը նստած է խորքային հորերի վրա։ Ժամանակին խորքային հորերից անձամբ նմուշ եմ վերցրել, տարել լաբորատորիա։ Այդ ջուրը խմելու համար ընդհանրապես ենթակա չէ, քանի որ ռադիացված են, բարձր ռադիացիոն ֆոն կա մեր շրջանում։ Թող տանեն, ստուգեն բոլոր աղբյուրներից, անկախ այն բանից ինքնահոս է դուրս գալիս, թե պոմպով։ Քանի մարդ է քաղցկեղից մեր գյուղում մահացել, ու այսօր էլ մի 5-6 մարդ կա, որ քաղցկեղով հիվանդ են։ Սրտանոթային հիվանդությունները, երիկամային, ամբողջ մարդկանց ատամները թափվում են:

Ժամանակին մարդկանց բերեցինք, որ գյուղի վերևում ջրամբար կառուցվի։ Եկան, նայեցին, ահագին ոգևորվեցինք։ Բայց եթե հիմա, կամ հետագայում այդ տեղ ջուր չկա, ինչո՞վ պետք է ամբարտակը լցնեն, եթե Զոլաքարն ամբողջ ջուրը տարել է։

Ամբողջ Զորի թաղը, որտեղ որ գնում էր գետը, բավական գեղեցիկ տեղեր էին, հիմա այդամենը չորացել է, ոչինչ չի մնացել, անապատի է վերածվել։

Աստղաձոր գետի ջուրը լցվում էր Սևանա լիճ։ Ձվադրման շրջանում ձկները դուրս էին գալիս, ձվադրում կատարում, հիմա այսօր ջուր չկա, ձվադրում չկա, ձուկն էլ պակասում է։ Մեր պահանջին այն է, որ մեր ջուրն ինչպես ժամանակին եղել է, այդպես էլ պետք է վերականգնվի։ Մեր ջուրը տան մեզ։ Եթե ջրագիծ են կառուցել, իրենք խմելու ջուր են տանում, չենք ասում՝ լրիվ փակեն տան մեզ, թող ազգաբնակչության քանակով բաժանեն։ Թող երկուս ու կես անգամ իրենց շատ տան, մնացածը տան մեզ։

Անդրանիկ Կնյազյան՝ Աստղաձորի բնակիչ.

-Այսօր Զոլաքարը շուրջօրյա ջուր ունի, իսկ Աստղաձորը ջուր է ստանում երկու օրը մեկ, այն էլ՝խորքային հորերից։ Երբդ պրոց են կառուցել Մարտունիում, սանէպիդկայանը թույլ չի տվել, որ խորքային հորերի ջուրն օգտագործենք, որովհետև երեխաների համար վտանգավոր է։ Երբ ես ասացի՝ ամբողջ Աստղաձորը նստած է խորքային հորերի վրա, վտանգավոր չէ՞, պատասխանեցին՝ վտանգավոր է։ Այդ դեպքում ինչի՞ եք թույլ տալիս։ Ասում են՝ փակեք։ Բա որ փակենք, ի՞նչ ջուր ենք խմելու։

Եթե ջրամբարը կառուցեն, հրաշալի կլինի։ Բայց ջրամբարի ջուրը խմելու չի լինի։

15 տարի բողոքում ենք, որ Աստղաձորը նստած է ուրանի հանքերի վրա։ Եվջրի մեջ ուրանի պարունակություն կա, և ժողովուրդը չպետք է այդ ջուրը խմի։ Աստղաձորցիներն ատամ չունեն։ Քաղցկեղ հիվանդությունը մեր գյուղում շատ տարածված է։ Միայն անցած տարի 11 հոգի մահացել է քաղցկեղից։ Ենթադրում եմ՝ ջրի պատճառով։

Զոլաքարում գետի ջրից օգտվելիս, քանի որ գետի ջուրն ինքնահոսէ, 1 մետր խորանարդի համար վճարվում է 18 դրամ, իսկ քանի որ մենք օգտվում ենք արտեզյան ջրից, որի համար պոմպ է օգտագործվում, էլեկտրաէներգիայի ծախս կա և այլն, 1 ժամի համար վճարում ենք 1800 դրամ: Եթե պոմպն էլ փչացավ, մինչեւ 2200 դրամ վճարում ենք: Այսինքն, մենք կրկնակի, եռակի անգամ վնաս ենք կրում:

Մեր պահանջն է՝ կամ գործող ջրագծի մեկերրորդը տան Աստղաձորին, ինչպես իրենք ժամանակին հայտարարել են տարբեր առիթներով, կամ գոնե ոռոգման ջուրը ամառվա երեք ամիսներին թողնեն, մենք յոլա գնանք:

4.Պատասխանողների ներկայացուցիչների փաստարկները և իրավական դիրքորոշումը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

ՂԵԿԱՎԱՐ

Ի _____ __

"__ " _____ 2020թ.

0047 ՀՀ Երևան, Նոր Մարաշ, Ա.Արմենակյան փ.129
☎ (374-10) 65.05.53, 65.46.95
Ֆաքս. (374-10) 65.16.60
Էլ. փոստ՝ info@hlib.am

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ»
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ՝ ՏԻԿԻՆ
ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գևորգյան

ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին ուղղված Ձեր 2020 թվականի ապրիլի 20-ի դիմումի կապակցությամբ, Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի քաղաքացիների բողոքի վերաբերյալ, հայտնում եմ, որ դիմումում բարձրացված հարցի կարգավորումը դուրս է ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունների շրջանակներից:

Միաժամանակ հայտնում եմ, որ դիմումում նշված Գեղարքունիքի մարզային փորձագիտական կենտրոնը ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ենթակայության կազմակերպություն չի:

Շնորհակալություն համագործակցության համար,

Недействительная подпись

X

ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Подписано: AVAGYAN HAKOB 3912770266 ՀԱԿՈԲ ԱՎԱԳՅԱՆ

Կատարող՝ Արմինե Աղոյան
ՀՀ ԱԱՏՏ գլխավոր մասնագետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010, Կառավարական տուն N 3
հեռ. (+ 374 60) 80 80 03
էլ. փոստ info@moh.am

23.04.20 N 1/4/04/8160-20
Ձեր N _____

«ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԽՈՐՀՈՒՐԴ» ՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի տիկին Գևորգյան

Ի պատասխան Ձեր 2020 թվականի ապրիլի 20-ի գրության՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գետի հունի փոփոխության պատճառով Աստղաձոր համայնքի բնակիչների ջրից չօգտվելու հնարավորության վերաբերյալ հայտնում եմ,

ՀՀ առողջապահության նախարարության կողմից բազմիցս տրվել են գրավոր պատասխաններ բարձրացված խնդրի վերաբերյալ: Նշված պատասխանները առկա են Ձեր կողմից ներկայացված փաստաթղթերում:

Միաժամանակ հայտնում եմ, որ գրությամբ նշված ոռոգման ջրի և Աստղաձոր գետի հունի փոփոխության հարցերը դուրս են ՀՀ առողջապահության նախարարության լիազորությունների շրջանակից:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ՝ ԱՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆ

Կատարող՝ Ռ. Գրիգորյան
ԱՆ «ՀԿԿ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ
Հեռ. 010550601

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԱՍՏՂԱԶՈՐԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Գ. Աստղաձոր
Արցախյան ազատամարտիկների 4
Հեռ. (094) 49 35 46
astghadzor.gegharqunik@mta.gov.am
www.astghadzor.am

N Ահ-215
«28» 04 2020թ.

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ԽՈՐՀՈՒՐԴ
ՀԿ ՆԱԽԱԳԱՀ
ԱՆԱՀԻՏ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ

Հարգելի Անահիտ Գևորգյան

Ի պատասխան Ձեր 20.04.2020թ. գրությանը՝ Աստղաձոր գետի ջրի հետ կապված, տեղեկացնում եմ , որ Աստղաձոր համայնքի հիմնվելու հիմքում ընկած է եղել համայնքի վարչական տարածքով անցնող գետը , որի ջրերը կառավարվելով ,,Գեղարքունիքի'' ՋՕԸ-ի կողմից համայնքի բնակիչները միշտ օգտագործել են հիմնականում հողամասերի ոռոգման նպատակով: 2016թ. -ին հարևան Զոլաքար համայնքը Աստղաձոր գետի ակունքային հիմնական ջրերը , առանց համայնքի կարծիքը հարցնելու տեղափոխել է խողովակաշարով իրենց համայնք , որի հետևանքով Աստղաձոր գետը հուլիս ամսից սկսած ցամաքում է , իսկ Աստղաձորի պեմպակայանի մղած ջուրը չի բավարարում համայնքում ոռոգման սեզոնը լիարժեք կազմակերպելուն: Ժամանակին երկու համայնքների միջև եղել է պայմանավորվածություն Աստղաձոր գետի ջրերի օգտագործման վերաբերյալ:

Հարգանքով

Աստղաձոր համայնքի ղեկավար՝ [illegible] Ն. [illegible]աչատրյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

№ _____5/07.2/4723_____

«_____»«_____»2020 թ.

«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ-ի նախագահ տիկին Ա.Գևորգյանին
Գեղարքունիքի մարզ, ք. Մարտունի, 1402, Պուշկին փող. 8
էլ. հասցե՝ kananc7@gmail.com

Հարգելի տիկին Գևորգյան

Ի՝ պատասխան Ձեր 2020 թվականի ապրիլի 20-ի գրության հայտնում եմ, որ Գեղարքունիքի մարզի Զոլաքարի համայնքապետարանը 2015 թվականի մայիսի 20-ին դիմել է ՀՀ բնապահպանության նախարարություն՝ խմելու-կենցաղային նպատակով համայնքի վարչական տարածքում գտնվող «Գռան» կոչվող աղբյուրից 10.8 լ/վ ջրաքանակով ջրօգտագործման թույլտվություն ստանալու հայտով՝ սահմանված կարգով ներկայացնելով ջրօգտագործման թույլտվության ստացման համար ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N218-Ն որոշմամբ պահանջվող բոլոր փաստաթղթերը:

ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N217-Ն որոշման պահանջների համաձայն Զոլաքար համայնքի ջրօգտագործման թույլտվության նախագիծը 2015 թվականի սեպտեմբերի 3-ի «Голос Армении» թերթում ներկայացվել է հասարակայնության ծանուցման: ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված ժամկետում (5 օրյա ժամկետ) ծանուցմամբ ներկայացված համայնքի ջրօգտագործման թույլտվության նախագծի վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարությունը որևէ դիտողություն և առաջարկություն չի ստացել, և ջրօգտագործման թույլտվության նախագիծը՝ համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 217-Ն որոշման, համարվել է դրական: Ներկայացված փաստաթղթերի ամբողջական փաթեթը նախնական դրական գնահատելուց հետո Զոլաքար համայնքին խմելու-կենցաղային նպատակով 29.10.2015-29.10.2020թթ. գործողության ժամկետով տրամադրվել է N000350 ջրօգտագործման թույլտվություն՝ 10.8 լ/վ ջրաքանակով:

2016 թվականի փետրվարի 8-ին Զոլաքար համայնքը դիմել է խմելու-կենցաղային նպատակով 10.8 լ/վ ջրաքանակով 2015 թվականին տրամադրված N000350 ջրօգտագործման թույլտվությունը համայնքի վարչական տարածքում գտնվող «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակի» կոչվող չորս բնական աղբյուրից 23.1 լ/վ գումարային ջրաքանակով վերանձևակերպելու նպատակով: ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N218-Ն որոշման համաձայն ներկայացված «Հիդրոերկրաբանական մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված հիդրոերկրաբանական տեղեկատվության համաձայն «Մեծ ձորի թմբան տակի» աղբյուրի ջրաքանակը կազմել է 16.8 լ/վ: Համաձայն ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N217-Ն որոշման պահանջների՝ Զոլաքար համայնքի ջրօգտագործման թույլտվության նախագիծը 2016 թվականի մարտի 24-ի «Голос Армении» թերթում ներկայացվել է հասարակայնության ծանուցման: ՀՀ կառավարության վերոնշյալ որոշմամբ սահմանված ժամկետում (5 օրյա ժամկետ) ծանուցմամբ ներկայացված ջրօգտագործման թույլտվության նախագծի վերաբերյալ ՀՀ բնապահպանության նախարարությունը կրկին որևէ դիտողություն և առաջարկություն չի ստացել:

2016 թվականի ապրիլի 15-ին ՀՀ բնապահպանության նախարարությունը դրական է գնահատել համայնքապետարանի ջրօգտագործման թույլտվության ստացման հայտը և Զոլաքար համայնքին տրամադրել է N000078 ջրօգտագործման թույլտվություն մինչև 15.04.2021թ. ժամկետով «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակի» կոչվող չորս բնական աղբյուրից՝ 23.1 լ/վ գումարային ջրաքանակով:

ՀՀ բնապահպանության նախարարությունը Զոլաքար համայնքին ջրօգտագործման թույլտվություններ տրամադրել է բացառապես ՀՀ ջրային օրենսգրքի և ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N218-Ն որոշման պահանջների համաձայն:

Ելնելով վերոգրյալից՝ հայտնում եմ, որ Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքին տրամադրված ջրօգտագործման թույլտվությունն իրավաչափ է և ջրօգտագործման թույլտվության տրամադրման գործընթացն իրականացվել է՝ ապահովելով ընդունված համապատասխան վարչական ակտին ներկայացվող բոլոր էական փաստական և իրավական պահանջները:

Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի կողմից հիշյալ աղբյուրների առնչությամբ շարունակ բարձրացվող խնդրի վերաբերյալ Աստղաձոր համայնքին ՀՀ բնապահպանության նախարարության կողմից 22.01.2018թ. N5/18.2/180015, 18.04.2018թ. N 3/18.2/30193 գրություններով, ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի հուլիսի 9-ի 01/18.1/3310 գրությամբ ներկայացված՝ «ԷկոԼուր» տեղեկատվական Հ/Կ նախագահ Ի. Զարգիչյանի կողմից բարձրացված. «Գեղարքունիքի մարզի Աստղաձոր գետի ավազանի ջրերը դեպի Զոլաքար գյուղ ուղղելու համար տրված ջրօգտագործման թույլտվության տրամադրման իրավաչափության հարցի վերաբերյալ» ներկայացված բողոքի առնչությամբ տեղեկացվել է, որ վերոհիշյալ «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակի» կոչվող աղբյուրների ազատ հոսքից ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N218-Ն որոշման պահանջների համաձայն Աստղաձոր համայնքը պետք է դիմի շրջակա միջավայրի նախարարություն ջրօգտագործման թույլտվություն ստանալու հայտով, սակայն առ այսօր Աստղաձոր համայնքը ջրօգտագործման թույլտվության ստացման հայտ չի ներկայացրել:

Հարգանքով՝

Invalid signature

ԱՐՄԱՆ ԱՎԱԼՅԱՆ

Words: 524 English (United States)

5. Դատավոր Անահիտ Գևորգյան, «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ.

Աստղաձոր համայնքի բնակիչների ջրի իրավունքի խախտման դատավարությունը ձեռնարկեցինք այն բանի համար, որ խախտվել էր Աստղաձոր համայնքի՝մոտ 3700 բնակիչ ունեցող գյուղի ջրի իրավունքը:

2016 թ. Զոլաքար համայնքը դիմել է իր վարչական տարածքում գտնվող ակունքների ջուրը որպես ոռոգման և խմելու ջուր տեղափոխելու, ջրի օգտագործման թույլտվություն ստանալու համար: Շրջակա միջավայրի նախարարությունը ջրօգտագործման թույլտվություն տրամադրելու համար իրականացրել է հանրային լսում: Այդ հանրային լսման հայտարարությունը տեղադրվել է «Голос Армении» թերթում, որն ընդհանրապես որևէ կապ չունի աստղաձորցիների հետ: Թեկուզ մեկ օրինակ ստանո՞ւմ են այդ թերթից: Այդ հանրային լսումը կատարվել է Զոլաքար համայնքում: Աստղաձոր համայնքի բնակիչները հնարավորություն չեն ունեցել մասնակցել և իրենց կարծիքն ասել ջրի օգտագործման իրենց իրավունքի վերաբերյալ: Այնուհետև տրվել են համապատասխան փաստաթղթեր, կազմվել է նախագիծ-նախահաշիվ: Կատարվել են մեծ արժեք ունեցող շինարարական

աշխատանքներ։ Առանց Աստղաձոր համայնքի կարծիքը հաշվի առնելու ակունքի ջրերն ամբողջովին տեղափոխվել են Զոլաքար համայնք։ Գյուղը մնացել է առանց ջրի։

Եվ ինչն է այս գործի մեջ ամենախրթինը և տարակասելին։ Ես ուզում եմ հստակ նշել Առողջապահության նախարարության երկու որոշումները, որոնք այս պարագայում իրար հակասում են։ Ջրի տեղափոխման ծրագրի, ջրօգտագործման թույլտվության տրամադրման համար հիմք է հանդիսացել Առողջապահության նախարարության այն եզրահանգումը, որ Զոլաքար համայնքում ջրի որակը վատն է և վնասում է մարդկանց առողջությանը։ Դա 2014 թ. է եղել։ 2017 թ. այդ նույն նախարարությունը գրում է, որ Աստղաձոր և Զոլաքար համայնքներում, որոնք նույն հարթության վրա են գտնվում և օգտվում են նույն ջրից, ջրի որակի ստանդարտների փոփոխություն չի արձանագրվել։ Այսինքն՝ ջուրը դարձել է լավ։ Թե ինչպես դարձավ, դա երևի փորձագետները կարող են ասել։

2017 թ. Աստղաձորի բնակիչները սկսել են բարձրաձայնել խնդրի մասին։ Դիմել են տարբեր ատյաններ, դատախազություն, մարզպետարան, Շրջակա միջավայրի նախարարություն, տեսչություններ, այդ թվում՝ մեր կազմակերպություն։ Մենք նամակներ հղեցինք տարբեր ատյաններ՝ Առողջապահության նախարարություն, Շրջակա միջավայրի նախարարություն, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմին, Գեղարքունիքի մարզպետարան և Զոլաքարի ու Աստղաձորի համայնքապետարաններ։ Ունենք չորս պատասխան՝ Աստղաձորի համայնքապետարանից, Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնից, Առողջապահության և Շրջակա միջավայրի նախարարություններից։ Աստղաձորի համայնքապետարանը շատ հստակ պատասխանել է, որ հանրային լսում չի եղել, որ իրենց համայնքի բնակիչների կարծիքը հաշվի չի առնվել այն պարագայում, որ 2006 թ. այդ գետի ջրից երկու օր օգտվել է Աստղաձոր համայնքը, 5 օր՝ Զոլաքարը։ Աստղաձորին ամբողջովին զրկել են այդ գետի ջրից օգտվելու հնարավորությունից։

Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը գրել է, որ դա իր իրավասություններից դուրս է։ Շրջակա միջավայրի նախարարության պատասխանում նշված է, որ ջրօգտագործման թույլտվությունը համապատասխանում է Զոլաքար համայնքին։ Բոլորովին անտեսել են այն, որ այնտեղ կա մի համայնք, որն այդ ջրից օգտվել է։ Բացարձակ չի խոսվում Աստղաձոր համայնքի մասին։

Աստղաձոր գետի ջրի տեղափոխումը միայն իրավունքի խնդիր չէ։ Նախ՝ գյուղը զրկվել է ջրից։ Հուլիսին գետն ամբողջովին ցամաքում է։ Գյուղը ոռոգման ջուր չի ունենում։ Պոպմակայանն աշխատում է, բայց ապահովում է ոռոգման ջրի միայն մի

մասը: Մարդիկ կանգնել են փաստի առաջ: Որպես գյուղատնտեսական համայնք ոռոգման ջրի լուրջ խնդիր ունի: Եվ երրորդը՝ էկոլոգիան է խախտվել: Երբ դարերով այդ ջուրն այդ առվով հոսել է, դու միանգամից կտրում ես, ամբողջ էկոհամակարգն է խախտվում, աղբյուրներն են ցամաքում, տարածքն անապատացվում է, կանաչն է վերանում: Աստղաձորը մեր տարածաշրջանի ամենասակավաջուր համայնքն է: Եվ այսպես վարվել 3700 բնակիչ ունեցող համայնքի հետ՝ միայն թողնել խորքային հորերի ջրերի և պոմպակայանների հույսին:

Դատավարությունը մեկ նպատակ ունի՝ հանրային հնչեղություն տալ և պատկան մարմինների ուշադրությունը հրավիրելը այս խնդրին, որն արդեն չորրորդ տարին է՝ չի լուծվում:

6. Փորձագետ Ռոզա Զուլիակյան, փորձաքննական եզրակացություն

2016թ-ին «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային ծրագրի (Republic of Armenia Infrastructure and Rural Finance Support Programme (IRFSP), Loan No. 2000000779 Grant No. 2000000780) շրջանակներում Աստղաձոր գետի ավազանի ջրերն ուղղվել են Գեղարքունիքի մարզի Զոլաքար գյուղ: Այդ ծրագրի շրջանակներում 2016 թ. Զոլաքար համայնքին տրվել է ջրօգտագործման թույլտվություն՝ Զոլաքար համայնքի վարչական տարածքում գտնվող «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող բնական 4 աղբյուրներից 23.1 լ/վրկ ջուր օգտագործելու համար:

«Գռան» և «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող բնական աղբյուրները Աստղաձոր գետի սնման հիմնական աղբյուրներ են: Աստղաձոր գետը սնուցող աղբյուրներից ջրառի արդյունքում գետը դարձել է խիստ սակավաջուր, իսկ ամռան սեզոնին ամբողջովին ցամաքում է, ինչի հետևանքով այդ գետից նախկինում օգտվող Աստղաձոր համայնքը կանգնել է լուրջ խնդիրների առաջ, և գյուղի մոտ 3700 բնակիչ մնացել է առանց ջուր: Իսկ ոռոգման սեզոնին «Մարտունի ՋՕԸ»-ն Սևանա լճից չի կարողանում մատակարարել բավարար քանակությամբ ոռոգման ջուր՝ ջրամղիչ պոմպերի հաճախակի խափանումների պատճառով:

Գետի ամբողջ էկոհամակարգը խախտվել է: Գետի ցամաքեցումն իր հերթին հանգեցրել է Աստղաձոր համայնքի բնակիչների ջրի իրավունքի խախտմանը, որի տարածքով հոսում է Աստղաձոր գետը:

Ծագած խնդիրների կարգավորման և ջրի նկատմամբ իրենց իրավունքների վերականգնման նպատակով Աստղաձորի մի խումբ բնակիչներ երկար ժամանակ է՝ պայքարում են՝ օգտվելով օրենքով թույլատրված բոլոր միջոցներից՝ բողոքի ակցիայի կազմակերպում՝ 2017 թվականի հուլիսի 10-ին Երևան-Վարդենիս-Արցախ

մայրուղու արգելափակում, ակտիվ երկխոսություն ջրի վերաբաշխման ծրագրին եզրակացություն և թույլտվություն տված պատասխանատու նախարարությունների, գերատեսչությունների և տեղական ինքնակառավարման մարմնի հետ https://www.ecolur.org/hy/news/sevan/---/9806/, քաղաքացիական հասարկության հետ ակտիվ քննարկումների և դրանց արդյունքների հանրայնացում https://www.ecolur.org/hy/news/sevan/---/9803/, դիմումների և հայցերի ներկայացումներ դատաիրավական մարմիններին: Սակայն առ այսօր խնդիրը լուծում չի ստացել, և առաջացած սոցիալական, իրավական խնդիրները և միջհամայնքային կոնֆլիկտները մնում են առկախված:

Վերլուծենք ստեղծված իրավիճակն ըստ փուլերի

Մինչև ծրագրի իրականացումը 2010թ. Աստղաձոր գետի ջուրը (135լ/վրկ) ոռոգման նպատակով 5 օր տրամադրվում էր Զոլաքար գյուղին, 2 օր Աստղաձոր գյուղին՝ համաձայն «Մարտունի» ՋՕԸ—ին տրված տարեկան 102 օր տևողությամբ ջրօգտագործման թույլտվության:

Ա. Ծրագրի իրականացման փուլ և ներգրավված կառույցների գործողություններ՝

Իրականացված «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային ծրագրի շրջանակներում Աստղաձոր գետի հաշվին Զոլաքար հայմայնքի ջրի խնդիրը լուծելու համար հիմք են ընդունվել հետևյալ փաստաթղթերը՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը

2. ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած Զոլաքար (որտեղ ուղղվել է ջուրը) գյուղում ջրի որակի ստուգման արդյունքները

3. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի դիմումը:

Ա.1. ՀՀ բնապահպանության նախարարություն

- Դեռևս 2015 թվականին Զոլաքարի համայնքապետարանին տվել է Զոլաքար համայնքի վարչական տարածքում գտնվող «Գռան» կոչվող բնական աղբյուրներից 339,38 հազար խմ խմելու ջուր օգտագործելու համար 000350 ջրօգտագործման թույլտվությունը, որը 2016թ. ուժը կորցրած է ճանաչել, հիմք ընդունելով 2016 թվականին «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող բնական 4 աղբյուրներից 23.1 լ/վրկ (729,27 հազար խմ) ջուր օգտագործելու համար տրված 00078 ջրօգտագործման

թույլտվությունը: Այսինքն, նույն համայնքի համար ջրապահանջի ծավալն ավելացրել է 2,1 անգամ՝ լուրջ վտանգ ստեղծելով այդ աղբյուրների ջրերից սնվող Աստղաձոր գետի հոսքի և գետի հունի տարածքի էկոլոգիական հավասարակշռության համար, ինչպես նաև գետից օգտվող Աստղաձոր համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համար /Խախտվել է ՀՀ ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածի 5–րդ կետի պահանջը/:

- Ջրօգտագործման թույլտվության հայտի մասին հասարակայնության ծանուցումը կատարել է ոչպատշաճ կարգով, հայտարարությունը տրվել է մարզի բնակիչների համար անհասանելի «Գոլոս Արմենիա» օրաթերթում, ինչի հետևանքով Աստղաձոր համայնքի բնակիչները, որոնք կրելու էինԱստղաձոր գետի հոսքի նվազման հետևանքները, հնարավորություն չեն ունեցել մասնակցելու Զոլաքար համայնքում կազմակերպված հասարակական լսումներին և չեն ներկայացրել իրենց տեսակետը /Խախտվել են ՀՀ Ջրային օրենսգրքի 30-րդ և ՀՀ կառավարության 2003 թվականի մարտի 7-ի N 218-Ն որոշման 3-րդ հավելվածի 7-րդ կետի պահանջը/:

- 00078 ջրօգտագործման թույլտվությունը տրվել է անհիրատեսական ելակետային տվյալների վրա: Մասնավորապես, ջրօգտագործման հիմք հանդիսացած ՀՀ բնապահպանության նախարարության «Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալները «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող բնական 4 աղբյուրների ջրաքանակների (համապատասխանաբար 24,52լ/վրկ և 16,8լ/վրկ) վերաբերյալ հավաստի չեն, այլապես Աստղաձոր գետի ջրերը չէին ցամաքի 23,1 լ/վրկ քանակությամբ ջրառից հետո, և նույն աղբյուրների մնացորդային ջրերից Աստղաձորի համայնքին թույլտվություն տալու նախարարության առաջարկը հիմնավորված չէ / 018.2/15 22.01.2018թ. նամակ/:

- 000350 ջրօգտագործման թույլտվությամբ տրված 10,8 լ/վրկ ջրառն իրականացվել է միայն «Գռան» աղբյուրից, որը գտնվում է Զոլաքար գյուղի վարչական տարածքում: Իսկ 2016 թ. տրված ջրային թույլտվությամբ ջրառն իրականացվել է նաև «Մեծ ձորի թմբան տակ» աղբյուրից, որն ապահովում էր Աստղաձոր գետը ջրով: Արդյունքում, գետը զրկվել է այդ ջրից, որն ուղղվել է Զոլաքար գյուղ՝ թողնելով Աստղաձոր գյուղն առանց ջրի:

Ա.2. ՀՀ առողջապահության նախարարություն

- ՀՀ կառավարության 2003թ. մարտի 7-ի N 218-Ն որոշման «Ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթեր» 2-րդ հավելվածի 14-րդ կետով նշվող կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում պահանջվող փաստաթուղթը, որը տրվել

է ՀՀ առողջապահության նախարարության առողջապահական տեսչական մարմնի Մարտունու մարզային փորձագիտական կենտրոնի կողմից, ըստ աստղաձորցիների, կեղծիք է, քանի որ 3000մ բարձրության վրա գտնվող ջրաղբյուրներից նմուշառումը հունվար ամսին գործնականում անհնար է: ՀՀ առողջապահության նախարարությունը հաշվի չի առել այդ հանգամանքը:

Ա. 3. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի դիմում

- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ ՀՀ կառավարությանն առընթեր «ԳՏՏՁ ԾԻԳ» ՊՀ-ին ուղղված 19.05.2015 թ. դիմումը միակողմանի և կողմնակալ է, քանի որ այդ դիմումում անտեսվել է նույն մարզի մեկ այլ՝ Աստղաձոր համայնքի բնակիչների շահերը և դրանով իսկ խախվտել են Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի նիստի «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» N 25արձանագրային որոշման սկզբունքները:

Ա.4. Իրականացված «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային ծրագիր

- Ծրագրի իրականացման հնարավորությունները դիտարկվել և կյանքի են կոչվել բացառապես Զոլաքար համայնքի կարիքների գնահատման տեսակետից՝ դիտարկելով միայն Զոլաքար համայնքի հորերի վատ որակի փաստարկը:

-Ծրագրի իրականացման գրասենյակն ուշադրություն չի դարձրել, որ, Աստղաձոր գյուղից ջուրը տանելով, պետք է ունենար նաև Աստղաձոր գյուղի հորերի ջրի որակի մասին ՀՀ առողջապահության նախարարության եզրակացությունը, այլ ոչ միայն Զոլաքարինը, հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ երկու գյուղերում հորերը գտնվում են միևնույն երկրաբանական ֆորմացիայում, և գյուղերը տեղակայված են կողք կողքի:

- Ծրագիրը հակասում է հիմնադրամի որդեգրած՝ հողի, ջրի անվտանգ մատչելիության, տնտեսական և սոցիալական պլանում գյուղական համայնքների տրանսֆորմացիայի համապատասխանության և գենդերային հավասարության ու ընդգրկողականության քաղաքականությանն ու նպատակներին:

Բ. Դատաիրավական փուլ

- Խնդրի կարգավորման և ջրի նկատմամբ իրենց իրավունքների վերականգնման նպատակով Աստղաձորի մի խումբ բնակիչներ 2018 թ. հոկտեմբերի 14-ին նամակով դիմել էին ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին՝ պահանջելով վերականգնել

ջրի նկատմամբ իրենց խախտված իրավունքները, քննություն իրականացնել, բացահայտել բոլոր անօրինակությունները ու չարաշահումները: **Ըստ բնակիչների՝ «Գործի մեջ կային քրեական տարրեր՝ կոռուպցիա, օրենքի խախտում»:** Դատախազին դիմելուց հետո ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնում նյութեր էին նախապատրաստվել, որոնք ոստիկանության եզրակացությամբ թողնվել էին անհետևանք:

Աստղաձորցիները 2019թ. հունիսին կրկին դիմել են ՀՀ գլխավոր դատախազ Արթուր Դավթյանին: Մարտունու բաժնում այդ կապակցությամբ նութեր են նախապատրաստվել՝ դրան կցելով ոստիկանության նախկին եզրակացությունը: Հունիսի 9-ին տեսուչ Ռ. Մուշեղյանի կողմից կրկին մերժվել է քրեական գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության հիմքով:

Հունիսի 21-ին Մուշեղյանի որոշման դեմ բողոքարկել են Գեղարքունիքի մարզի դատախազ Ռաֆայել Երիցյանին: Դատախազ Ռաֆայել Երիցյանը հայցը մերժել է, մերժման որոշումը կայացրել է 2019 թ. հուլիսի 5-ին՝ ՀՀ Սահմանադրության օրը, որը ոչ աշխատանքային օր է:

2019թ. օգոստոսի 10-ին՝ մեկ ամսվա ընթացքում, սահմանված կարգով, այս որոշման դեմ ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազի՝ 2019 թ. հուլիսի 5-ի որոշման դեմ և ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնի հետաքննության խմբի տեսուչ Ռ. Մուշեղյանի՝ 2019 թ. հունիսի 9-ին կայացրած քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումը վերացնելու վերաբերյալ բնակիչները բողոքարկել են դատարան: Վարդան Գրիգորյանի հետ միասին այս գործով որպես բողոքագիր են հանդես եկել Աստղաձորի ևս 4 բնակիչ՝ Արամայիս Ասատրյանը, Սուրիկ Պետրոսյանը, Վազգեն Մինասյանը և Վարդգես Սեդրակյանը:

Վերջին բողոքարկումից հետո սույն գործով առաջին դատական նիստը նշանակվել է օգոստոսի 23-ին, ինչի մասին ծանուցագիրն աստղաձորցիները ստացել են 3 օր անց՝ օգոստոսի 26-ին: Բնականաբար, դատական նիստը չէր կայացել:

2019 թվականի սեպտեմբերի 4-ին Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի Սևանի նստավայրում պետք է քննության առնվեր այս գործը: Սակայն նիստը հետաձգվել է, քանի որ, ըստ նախագահող դատավոր Դավիթ Սարգսյանի, գործին առնչվող նյութերը դեռևս իր ձեռքի տակ չեն, իսկ գործով հետաքննիչը չի ներկայացել դատական նիստին: Հաջորդ դատական նիստը նշանակվել է սեպտեմբերի 19-ին:

2019թ. նոյեմբերի 25-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին դատարանը, քննելով գործում առկա նյութերը և ղեկավարվելով ՀՀ Քրեադատավարական օրենսգրքի 185 և 313-րդ հոդվածներով, իր ԳԴ4/0007/11/19

որոշմամբ մերժել է Աստղաձորի բնակիչների բողոքը՝ գտնելով, որ քրեական գործ հարուցելու հանցակազմ գործում չկա։ https://www.ecolur.org/hy/news/water/---/11517/

ԽԱԽՏՈՒՄՆԵՐ՝

1. ՀՀ բնապահպանության նախարարության կողմից Զոլաքարի համայնքին N 78 ՋԹ-ի տրման գործընթացում չի պահպանվել ՀՀ ջրային օրենսգրքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով պահանջվող՝ օգտագործելի ջրային ռեսուրսների մատչելիության արդարացիության սկզբունքը և խախտվել են այլ անձանց իրավունքները։ Չի պահպանվել նաև Ջրային օրենսգրքի 30.1 հոդվածի 5-րդ մասի պահանջը, որը սահմանում է ՋԹ-ի տրամադրման մերժման հիմքն այն դեպքում, երբ հայցվող ջրօգտագործման թույլտվության տրամադրումը կարող է բացասական ազդեցություն ունենալ գործող ջրօգտագործման թույլտվություն ունեցողների իրավունքների վրա։

ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի բնակիչներին ուղղված ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. հուվարի 18-ի N ՆԳ/411-18 գրության մեջ նշված «2017 թվականին կատարված մոնիթորինգի արդյունքում Աստղաձոր և Զոլաքար համայնքներում խմելու ջրի որակի շեղումներ չեն նկատվել» եզրույթը հակասում է նույն նախարարության կողմից ծրագրի մեկնարկի համար հիմք հանդիսացող Զոլաքար գյուղի խմելու ջրի որակական շեղումներ ունենալու վերաբերյալ 2014 թ. տված եզրակացությանը։ /**Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 7-ի «Ջրօգտագործման թույլտվության օրինակելի ձևաթուղթը և ջրօգտագործման թույլտվության ձևերը, ջրօգտագործման թույլտվության տրամադրման, ջրօգտագործման թույլտվության երկարաձգման կարգերը, ջրաղբյուրի, հորատանցքի անձնագրերի և հիդրոերկրաբանական հորատանցքի նախագծային երկրաբանատեխնիկական կտրվածքի ձևերը հաստատելու մասին»***(վերնագիրը լրաց. 12.05.11 N677-Ն)* N 218-Ն որոշման հավելված 2՝ **«Ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթերի ցանկ», կետ 14.** «Կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում՝ համապատասխան փաստաթուղթ (եզրակացություն)՝ տրված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության, առողջապահական տեսչական մարմնի մարզային փորձագիտական կենտրոնների կողմից»**/:**

1. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ Զոլաքարի ջրի վերաբաշխման մասին դիմումը միակողմանի է և կողմնակալ, քանի որ այդ դիմումում անտեսվել են նույն մարզի մեկ այլ՝ Աստղաձոր համայնքի բնակիչների շահերը։

6.Դատարանի իրավական վերլուծությունը

Լսելով դիմումատուի, վկաների, տուժողների բացատրությունները հետազոտելով գործում առկա ապացույցները՝ դատարանն եկավ հետևյալ եզրահանգման.

«Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային ծրագրի հիմքում դրվել են հետևյալ փաստաթղթերը՝

- ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրամադրված ջրօգտագործման թույլտվությունը
- ՀՀ առողջապահության նախարարության տրամադրած Զոլաքար (որտեղ ուղղվել է ջուրը) գյուղում ջրի որակի ստուգման արդյունքները
- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի դիմումը:

ՀՀ բնապահպանության նախարարությունը

- 2015թ. Զոլաքարի համայնքապետարանին տվել է Զոլաքար համայնքի վարչական տարածքում գտնվող «Գռան» կոչվող բնական աղբյուրներից 339,38 հազար խմ խմելու ջուր օգտագործելու համար հ. 000350 ջրօգտագործման թույլտվությունը, որը 2016թ. ուժը կորցրած է ճանաչել՝ հիմք ընդունելով 2016թ. «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող բնական 4 աղբյուրներից 23.1 լ/վրկ (729,27 հազար խմ) ջուր օգտագործելու համար տրված հ.00078 ջրօգտագործման թույլտվությունը: Այսինքն, Զոլաքար համայնքի համար ջրապահանջի ծավալն ավելացրել է 2,1 անգամ՝ լուրջ վտանգ ստեղծելով այդ աղբյուրների ջրերից սնվող Աստղաձոր գետի որակի, ջրի քանակի, դրա հոսքի և հունի տարածքի էկոլոգիական հավասարակշռության խախտման համար, ինչպես նաև գետից օգտվող Աստղաձոր համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի **համար /Խախտվել է ՀՀ ջրային օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-5 –րդ կետերի պահանջները/:**
- Ջրօգտագործման թույլտվության հայտի մասին հասարակայնության ծանուցումը կատարել է ոչ պատշաճ կարգով, հայտարարությունը տրվել է մարզի բնակիչների համար անհասանելի «Գոլոս Արմենիա» օրաթերթում, ինչի հետևանքով Աստղաձոր համայնքի բնակիչները, որոնք կրելու էին Աստղաձոր գետի հոսքի նվազման հետևանքները, հնարավորություն չեն ունեցել մասնակցելու Զոլաքար համայնքում կազմակերպված հասարակական լսումներին և չեն ներկայացրել իրենց տեսակետը **/Խախտվել են ՀՀ Ջրային օրենսգրքի 30-րդ, 31-րդ հոդվածի 6–րդ կետի և ՀՀ կառավարության 07.03.2003թ. հ. 218-Ն որոշման 3-րդ հավելվածի 7-րդ կետի պահանջը/:**
- N.00078 ջրօգտագործման թույլտվությունը տրվել է սխալ՝ իրականությանը չհամապատասխանող ելակետային տվյալների վրա: Մասնավորապես, ջրօգտագործման հիմք հանդիսացած ՀՀ բնապահպանության նախարարության

«Հիդրոերկրաբանական մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի տվյալները «Գռան» և «Մեծ ձորի թմբան տակ» կոչվող բնական 4 աղբյուրների ջրաքանակների (համապատասխանաբար 24,52լ/վրկ և 16,8լ/վրկ) վերաբերյալ հավաստի չեն, այլապես Աստղաձոր գետը չէր ցամաքի 23,1 լ/վրկ քանակությամբ ջրառից հետո և նույն աղբյուրների մնացորդային ջրերից Աստղաձորի համայնքին թույլտվություն տալու նախարարության առաջարկը հիմնավորված չէ:

- N.000350 ջրօգտագործմամբ տրված 10,8 լ/վրկ ջրառն իրականացվել է միայն «Գռան» աղբյուրից, որը գտնվում է Զոլաքար գյուղի վարչական տարածքում: Իսկ 2016 թ. տրված ջրօգտագործման թույլտվությամբ ջրառն իրականացվել է նաև «Մեծ ձորի թմբան տակ» աղբյուրից, որն ապահովում էր Աստղաձոր գետը ջրով: Արդյունքում, գետը զրկվել է այդ ջրից, որն ուղղվել է Զոլաքար գյուղ՝ թողնելով Աստղաձոր գյուղն առանց ջրի:
- Զոլաքարի համայնքին հ.00078 ՋԹ-ի տրման գործընթացում չի պահպանվել **ՀՀ ջրային օրենսգրքի 5-րդ հոդվածի 6-րդ մասով** պահանջվող՝ օգտագործելի ջրային ռեսուրսների մատչելիության արդարացիության սկզբունքը և խախտվել են այլ անձանց իրավունքները: Ինչպես նաև **ՀՀ ջրային օրենսգրքի 30.1 հոդվածի 5-րդ մասի** պահանջը, որը սահմանում է ՋԹ-ի տրամադրման մերժման հիմքն այն դեպքում, երբ՝ հայցվող ջրօգտագործման թույլտվության տրամադրումը կարող է բացասական ազդեցություն ունենալ գործող ջրօգտագործման թույլտվություն ունեցողների իրավունքների վրա:

ՀՀ առողջապահության նախարարությունը.

- ՀՀ կառավարության 07.03.2003թ. հ.218-Ն որոշման «Ջրօգտագործման թույլտվություն ստանալու համար պահանջվող փաստաթղթեր» 2-րդ հավելվածի14-րդ կետով պահանջվող՝ կոմունալ-կենցաղային, բուժիչ և առողջապահական նպատակներով ջրօգտագործման դեպքում փաստաթուղթը, տրված ՀՀ առողջապահության նախարարության Առողջապահական տեսչական մարմնի Մարտունու մարզային փորձագիտական կենտրոնի կողմից, չի կարող հավաստի լինել, քանի որ 3000մ բարձրության վրա գտնվող ջրի աղբյուրներից նմուշառումը հունվար ամսին գործնականում անհնար է:
- ՀՀ առողջապահության նախարարության 18.01.2018թ. հ.ՆԳ/411-18՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի բնակիչներին ուղղված գրությամբ, որտեղ նշված է. «2017 թվականին կատարված մոնիթորինգի արդյունքում Աստղաձոր և Զոլաքար համայնքներում խմելու ջրի որակի շեղումներ չեն նկատվել» պնդումը հակասում է նույն նախարարության կողմից ծրագրի մեկնարկի համար հիմք հանդիսացող Զոլաքար գյուղի խմելու ջրի որակական շեղումներ ունենալու վերաբերյալ 2014թ. տված եզրակացությանը:

- ՀՀ ջրային օրենսգրքի 70-րդ հոդվածի համաձայն. «Բնակչության՝ խմելու, առողջապահական, կոմունալ և կենցաղային սպասարկման կարիքների համար հատկացվող ջուրը պետք է համապատասխանի խմելու ջրի ստանդարտներին: Խմելու ջրի մատակարարումն իրականացնող անձինք պետք է ապահովեն խմելու ջրի որակի համապատասխանությունը ստանդարտներին: Առողջապահության պետական լիազորված մարմինն օրենսդրությամբ սահմանված կարգով հսկողություն է սահմանում բնակչությանը մատակարարվող խմելու ջրի՝ ստանդարտներին համապատասխանության նկատմամբ:

Խմելու ջրի մատակարարման համակարգերը դասվում են կենսաապահովման կարևորագույն ջրային համակարգերի շարքին»: Աստղաձոր համայնքի ջրի որակի նկատմամբ հսկողություն չի իրականացվում:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանը

- ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի՝ՀՀ կառավարությանն առընթեր «ԳՏՏԶ ԾԻԳ» ՊՀ-ինհասցեագրված 19.05.2015 թ. դիմումը միակողմանի և կողմնակալ է, քանի որ այդ դիմումում անտեսվել են նույն մարզի մի այլ՝ Աստղաձոր համայնքի բնակիչների իրավունքները և օրինական շահերը, և դրանով իսկ խախտվել է ՀՀ կառավարության 30.06.2011թ. նիստի «Հայաստանի Հանրապետության տարածքային զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» հ.25 արձանագրային որոշման սկզբունքները:

Իրականացված «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային ծրագիրը.

- Ծրագրի իրականացման հնարավորությունները դիտարկվել և կյանքի են կոչվել բացառապես Զոլաքար համայնքի կարիքների գնահատման տեսակետից՝ դիտարկելով միայն Զոլաքար գյուղի հորերի վատ որակի փաստարկը:
- Ծրագրի իրականացման գրասենյակը ուշադրություն չի դարձրել, որ, Աստղաձոր գյուղից ջուրը տանելով, պետք է ունենար նաև Աստղաձոր գյուղի հորերի ջրի որակի մասին ՀՀ առողջապահության նախարարության եզրակացությունը, այլ ոչ միայն Զոլաքարինը՝ հատկապես հաշվի առնելով այն փաստը, որ երկու գյուղերում հորերը գտնվում են միևնույն երկրաբանական ֆորմացիայում, և գյուղերը տեղակայված են կողք կողքի:

Իրավապահ և դատական մարմինները.

- Խնդրի կարգավորման և ջրի նկատմամբ իրենց իրավունքների վերականգնման նպատակով Աստղաձորի մի խումբ բնակիչներ 14.10.2018թ. դիմել են ՀՀ գլխավոր դատախազին՝ պահանջելով վերականգնել ջրի նկատմամբ իրենց խախտված իրավունքները, քննություն իրականացնել, բացահայտել բոլոր անօրինակություններն ու չարաշահումները: Դիմումատուները վկայակոչել են

կոռուպցիոն տարբեր հանգամանքներ և ՀՀ օրենսդրության և իրենց իրավունքների խախտումներ: ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնում նյութեր էին նախապատրաստվել, սակայն քրեական գործի հարուցումը մերժվել է:

- Աստղաձորցիներն 2019թ. հունիսին կրկին դիմել են ՀՀ գլխավոր դատախազին: ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնում կրկին մերժվել է քրեական գործի հարուցումը՝ հանցակազմի բացակայության հիմքով:

- 21.06.2019թ. ՀՀ ոստիկանության Մարտունու որոշման դեմ բողոք է ներկայացվել Գեղարքունիքի մարզի դատախազին: Սակայն, այն մերժվել է մարազի դատախազի կողմից 2019 թ. հուլիսի 5-ին՝ ՀՀ Սահմանադրության օրը, որը ոչ աշխատանքային օր էր:

- 2019թ. օգոստոսի 10-ին ՀՀ Գեղարքունիքի մարզի դատախազի՝ 2019 թ. հուլիսի 5-ի և ՀՀ ոստիկանության Մարտունու բաժնի հետաքննության խմբի տեսուչ Ռ. Մուշեղյանի՝ «Քրեական գործ հարուցելը մերժելու մասին» 09.06.2019թ.որոշումները վերացնելու պահանջով բնակիչները դիմել են դատարան: Գեղարքունիքիմարզիընդհանուրիրավասությանառաջին ատյանիդատարանը 25.11.2019թ. որոշմամբ /գործ հ.ԳԴ4/0007/11/19/ մերժել է Աստղաձորի բնակիչների բողոքը, գտնելով, որ քրեական գործ հարուցելու հիմք գործում առկա չէ:

Խախտվել են Աստղաձորի բնակիչների **«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածով** սահմանված իրավունքները, մասնավորապես՝ բարենպաստ շրջակա միջավայրի և սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման, շրջակա միջավայրի սանիտարահամաճարակային իրադրության վերաբերյալ հավաստի և ամբողջական տեղեկատվության և իրազեկման, պետական մարմինների՝ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովմանը վերաբերող որոշումների և ծրագրերի մշակմանը, քննարկմանն ու ընդունմանը, սահմանված կարգով, մասնակցելու և դրանց իրականացումը վերահսկելու, ինչպես նաև սանիտարական կանոնների խախտման հետևանքով իրենց առողջությանը հասցված վնասի փոխհատուցում ստանալու իրավունքները:

Խախտվել է «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով սահմանված պահանջները, որն է՝ «Խմելու, կենցաղային, տնտեսական, արտադրական, տեխնիկական կարիքների համար օգտագործվող ջրի որակը պետք է համապատասխանի սանիտարական կանոններին»:

Խախտվել են Հայաստանի Հանրապետության կողմից վավերացված մի շարք միջազգային կոնվենցիաներով ստանձնած պարտավորություններ. Մասնավորապես.

- **«Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումների ընդունման գործընթացին հասարակության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին» /Օրհուս/ Կոնվենցիայի** 3-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր Կողմ ընդունում է անհրաժեշտ օրենսդրական, կանոնակարգող և այլ միջոցներ, ներառյալ միջոցներ՝ ուղղված սույն կոնվենցիայի տեղեկատվության մատչելիությանը, հասարակայնության մասնակցությանը, արդարադատության մատչելիության դրույթների իրականացումը կարգավորող նորմերի համատեղելիությանը, ինչպես նաև պատշաճ միջոցներ՝ ուղղված այդ դրույթների կիրառման ապահովմանը՝ սույն Կոնվենցիայի դրույթների իմպաեմենտացիայի նպատակով՝ հստակ, թափանցիկ և համաձայնեցված դաշտ ձևավորելու համար:
- **«Կենսաբանական բազմազանության մասին» Կոնվենցիայի** 14-րդ հոդվածի համաձայն. «1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, որքանով դա հնարավոր և նպատակահարմար է.

ա/ համապատասխան ընթացակարգեր է ներդնում, որոնց համաձայն՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատում է պահանջվում իր կողմից նախատեսվող ծրագրերի նկատմամբ, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա՝ այդպիսի ազդեցության հետևանքները կանխատեսելու և նվազեցնելու նպատակով, և, նպատակահարմարության դեպքում, ապահովում է այդպիսի ընթացակարգերի իրականացմանը հանրության մասնակցության հնարավորությունը,

բ/ համապատասխան միջոցներ է ձեռնարկում ապահովելու համար իր կողմից իրականացվող այն ծրագրերի և քաղաքականության էկոլոգիական հետևանքների հաշվի առնելը, որոնք կարող են զգալի բացասական ազդեցություն գործել կենսաբանական բազմազանության վրա»:

- **«Անապատացման դեմ պայքարի մասին» կոնվենցիայի** 4-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն. «2. Ձգտելով սույն Կոնվենցիայի նպատակների իրականացմանը, Կողմերը.

ա/ համալիր մոտեցում են ընդունում <u>անապատացման</u> և երաշտի <u>**ֆիզիկական, կենսաբանական և սոցիալ-տնտեսական ասպեկտների**</u> նկատմամբ,

գ/ <u>աղքատության արմատապես վերացմանն</u> ուղղված ռազմավարություններն ինտեգրացվում են անապատացման դեմ պայքարի և երաշտի հետևանքների նվազեցման ջանքերի մեջ,

դ/ նպաստում են Կոնվենցիայի Կողմ հանդիսացող ազդեցության ենթարկված պետությունների միջև համագործակցությանը շրջակա միջավայրի պաշտպանության և <u>**հողային ու ջրային ռեսուրսների պահպանության**</u> ոլորտներում, քանի որ այդ համագործակցությունը նպաստում է անապատացման և երաշտի դեմ պայքարին:»

Ելնելով վերը նշվածից՝ կատարելով բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ քննություն, ղեկավարվելով ՀՀ օրենսդրությամբ և միջազգային նորմերի պահանջներով՝ ՀՀ Բնապահպանական հանրային դատարանը

ՎՃՌԵՑ

1. Աստղաձոր գետի էկոհամակարգի վնասումը և ազդեցությունը Սևանա լճի վրա, աստղաձորցիների հիմնարար իրավունքների և օրինական շահերի խախտումները նպաստել են Աստղաձոր համայնքի բնակիչների սոցիալ-տնտեսական վիճակի վատթարացմանը, որոնց արդյունքում պատճառվել է էկոլոգիական, տնտեսական և մարդու առողջության վնաս, ճանաչել որպես էկոլոգիական հանցագործություն:

2. Ստեղծված իրավիճակի և ՀՀ օրենսդրության խախտումների համար պատասխանատու ճանաչել ՀՀ կառավարությանը՝ ի դեմս «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի, ՀՀ շրջակա միջավայրի, ՀՀ առողջապահության, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությունների:

3. Դիմել ՀՀ դատախազությանը

ա/ Հարուցել քրեական գործ՝ Աստղաձոր գետի աղբյուրներից Զոլաքար համայնքին ջրօգտագործման թույլտվություն տված, Աստղաձոր գետը և համայնքը ջրազրկման մեջ մեղավոր պաշտոնատար անձանց նկատմամբ՝ վերացնելով խախտումները և վերականգնելով դրա հետևանքով պետությանը և համայնքին պատճառած վնասները

բ/ Ստուգել Զոլաքար համայնքին ջրօգտագործման թույլտվության տրամադրման և Աստղաձոր համայնքի ջրազրկման օրինականությունը, «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր» վարկային ծրագրի գումարների նպատակային օգտագործումը:

4. Դիմել ՀՀ կառավարությանը՝ պահանջելով.

- 1. Ստուգել «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից իրականացված «Ենթակառուցվածքների և գյուղական ֆինանսավորման աջակցության ծրագիր»

վարկային ծրագրի իրականացման օրինականությունը և վարկային գումարների ծախսման արդյունավետությունը:

ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼ՝

- **ՀՀ կառավարության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնին**

ա) Կատարել համալիր ստուգում պարզելու համար Աստղաձոր գետի սնուցող աղբյուրներից Զոլաքար համայնքի կարիքների համար կատարված ջրառից հետո (2016-2020թթ) գետի հոսքի նվազման, ինչպես նաև Աստղաձոր գետի ջրավազանի էկոհամակարգերի խախտումների վերաբերյալ ստացված փաստերի հավաստիությունը, Աստղաձոր գետը սնուցող աղբյուրներից ջրօգտագործման թույլտվություններ տալու օրինականությունը:

բ) Հրապարակել ստուգումների ստուգման փաթեթը, մասնավորապես, ստուգման ակտի պատճենը, կամ ամբողջական բովանդակությունը, իրավախախտման արձանագրությունը, ստուգման արդյունքում տրված հանձնարարականները, այլ գերատեսչություններին ներկայացված միջնորդագրերը կամ առաջարկությունները, շրջակա միջավայրին պատճառված վնասի հաշվարկները բոլոր բաղադրիչներով:

- **ՀՀ շրջակա միջավայրի նախարարությանը**

ա/ Ուժը կորցրած ճանաչել Զոլաքար համայնքին 2016թ. տրվածհ.00078 ջրօգտագործման թույլտվությունը, ուժի մեջ թողնել 2015թ. հ. 000350 ջրօգտագործման թույլտվությունը:

բ/ Մշտադիտարկել /մոնիտորինգ/ Աստղաձոր գետի ավազանի էկոհամակարգը, ձեռնարկել միջոցներ այն վերականգնելու համար:

- **ՀՀ առողջապահության նախարարությանը**

ա) Կատարել Աստղաձոր համայնքի խմելու հորերի և ոռոգման ջրերի ֆիզիկական, կենսաբանական և քիմիական լաբորատոր հետազոտություններ, անհրաժեշտության դեպքում տալ ջրի օգտագործումը կասեցնելու մասին կարգադրագրեր:

բ) Հրապարակել կատարված անալիզների փաթեթը, մասնավորապես՝ պատճենը, կամ ամբողջական բովանդակությունը, անալիզների արդյունքներով տրված հանձնարարականները, կամ այդ ջրերի սանիտարական և առողջապահական նորմերին համապատասխանելու մասին տեղեկանքը, այլ գերատեսչություններին ներկայացված միջնորդագրերը կամ առաջարկությունները:

գ) Հետազոտել Աստղաձորի բնակիչների առողջական վիճակը և անորակ խմելու ջուր օգտագործելու արդյունքում հիվանդություններ ձեռք բերած քաղաքացիների ցանկը ներկայացնել Կառավարություն՝ փոխհատուցում տրամադրելու համար /հիմք՝ «Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված 4-րդ կետ/:

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը

ա) ՀՀ Վարչապետի 11 հունիսի 2019 թվականի N 659-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 9-րդ կետի 6) ենթակետին համապատասխան, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման բնագավառում պետական քաղաքականության իրականացնելիս, առաջնորդվել համայնքների համաչափ զարգացման սկզբունքներով, մասնավորապես՝ հանձնարարել ՀՀ Գեղարքունիքի մարզպետին՝ մշակելու Աստղաձոր համայնքի զարգացմանն ուղղված ծրագիր, որտեղ ներառված կլինեն համայնքում առկա՝ խմելու և ոռոգման ջրի խնդիրների լուծմանը միտված միջոցառումները:

բ) Հանձնարարել Գեղարքունիքի մարզպետարանին՝ մյուս շահագրգիռ գերատեսչությունների հետ համատեղ ապահովել Աստղաձոր համայնքին խմելու և ոռոգման ջրով:

գ) Միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու Աստղաձոր համայնքի բնակիչների կենցաղային և ֆիզիոլոգիական կարիքների համար խմելու ջրով անհրաժեշտ քանակությամբ՝ հիգիենիկ նորմատիվների համաձայն /«Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված/:

դ) Ապահովել անորակ խմելու ջուր օգտագործելու արդյունքում հիվանդություններ ձեռք բերած քաղաքացիներին փոխհատուցման տրամադրումը՝ ՀՀ առողջապահության նախարարության հետազոտությունների արդյունքների հիման վրա:

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեին

- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 10.09.2019թ. հրամանով հաստատված հավելվածի համաձայն՝ ապահովել պետական սեփականություն հանդիսացող «Սևանա լիճ» և «Աստղաձոր գետ» ջրային համակարգերի կայուն կառավարումն ու օգտագործումը:

- Վերահսկողություն սահմանել այդ համակարգերից ջրի արդարացի վերաբաշխման, ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիների սահմանափակումների և նորմերի պահպանման նկատմամբ:
- Միջոցներ ձեռնարկել ՀՀ Գեղարքունիքի մարզի Աստղաձոր համայնքին որակյալ ոռոգման ջրով ապահովելու, ոռոգման ցանցի վերանորոգման, ոռոգման սեզոնին ՀՏԿ-ների անխափան աշխատանքներն ապահովելու ուղղությամբ՝ բացառելով ջրակորուստները:

5. Դիմել ՀՀ Գեզարքունիքի մարզի Աստղաձոր համայնքի ղեկավարին և ավագանուն՝

- ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն ներկայացնել խմելու և ոռոգման նպատակով ջրօգտագործման թույլտվության ստացման հայտ՝ համապատասխան հիմնավորումներով
- Մշակել համայնքի խմելու և ոռոգման ջրի ապահովմանն ուղղված /մատակարարում, գործող ցանցերի հիմնավերանորոգում/ միջոցառումների ծրագիր, գտնել այդ ծրագրերի համաֆինանսավորման միջոցներ և աղբյուրներ, այն քննարկման ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավորներ՝

Ն.Վարդանյան

Ի. Զարաֆյան

Ա. Գևորգյան